

14 Հոկտեմբեր

Անտոն վարդապետ Թարգմանեան, որ հռովմէական եկեղեցիէն լուսաւորչական եկեղեցին ցատկած էր մեծ տօքթօր Շիշմանեանի յորդորանօքն, եւ որ վերջերս նորէն Լուսաւորչի եկեղեցիէն հռովմէական եկեղեցին անցած էր, եւ որ յայտնի չէ թէ քանի մը օրէն ո՛ր կրօնքը պիտի ընդունի, նամակ մը հրատարակելով կհերքէ այն լուրը՝ թէ դերասանութիւն ընել սկսած է: Միայն թէ Թրանսիլվանիոյ մէջ գտնուելով՝ այն տեղի սովորութեան համեմատ մօրուքն ածիլած է եղեր, եւ մօրուքը պատճառ տուած է եղեր իւր վրայ հրատարակուած անտեղի գրոյցներուն:

Ուրախ ենք, որ Անտոն վարդապետ իւր մօրուքն ածիլած է. եթէ հոս գտնուէր՝ Պատրիարքարանն պիտի կատարէր այդ մօրուքին արարողութիւնը:

15 Հոկտեմբեր

Դեսպանի մը հօրաքոյրը մեր եկեղեցւոյ արարողութեան շատ հաւնած լինելով՝ խնդրած է, որ օր մը ներկայ գտնուի: Լրագիրներէն ոմանք այս լուրը հրատարակելով կծանուցանեն, թէ Ս. Պատրիարքն օր մը Բերա՝յի եկեղեցւոյն մէջ յատկապէս պատարագ պիտի մատուցանէ:

Մենք հաւատք չենք ընծայեր այս լուրին: Թատերական ներկայացման համար մէկը կարող է ըսել. «այս - ինչ խաղը շատ սիրեցի, անգամ մ'ալ ներկայացուցէք որ տեսնեմ». բայց եկեղեցական արարողութեան համար չենք կարծեր, որ ասանկ առաջարկութիւն մը եղած լինի:

16 Հոկտեմբեր

Ամսեայ նոր հանդէս մ'ալ հրատարակուիլ սկսաւ *Վայելք* անունով եւ պ. Մ. Գալէնտերեանի տնօրինութեամբ:

Այս հանդէսը յատկապէս գեղեցիկ սեռին համար կհրատարակուի եւ այդ սեռին վերաբերեալ հագուստներն ձեւելու արհեստը կը սորվեցունէ:

Առաջին թիւը տեսնելու եւ աչքէ անցնելու պատիւն ունեցանք, բայց մենք բան մը չկրցինք հասկնալ. եթէ մինչեւ ամսու գլուխ բան մը հասկնամք՝ կ'իմացունենք: